ՆՈՐ-ԴԱՐ

№ 224 ՀՈՐԻՈՐԴ ՏԱՐԻ Հ. ապրած 26 Դեկտեմբերի **1887** Հ. ապրած 26 Դեկտեմբերի ՀՈՐԻՈՐԴ ՏԱՐԻ № 224

Տարեկան 10 բուբլի, վեց ամսուան՝ 6 բուբլի, երեք ամսով՝ 3 բ. 50 կ., ամսով՝ 1 բ. 50 կ., Հասոյ՝ 5 կոպէկ։
Բաժանորդ դրվում են Թիֆլիսում՝ վերին խմբագրատունը։

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի ուր օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամ։
Յայտարարութիւնների գումարն 2 կ., բոկաների համար կրկնապատիկ։

Խմբագրատան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» или Tiflis. Rédaction «Nor-Dar».

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԱՌԱՋԻԿԱՅ **1888** ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Հինգերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն չափով և ծրագրով

Խմբագրութիւնը կը տանայ և սեպհական հոգատարներ

Տարեկան գինն է 10 բուբլի, վեց ամսուան՝ 6 բուբլի, Հասով՝ 5 կոպ.
Եւրոպայի, Փերզիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 Ֆրանկ։
Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Թիֆլիսում բաժանորդ են գրվում Ղ. Ղ. «Նոր-Դարու»-ի խմբագրատանը (Կուրին) կից՝ Զուրաբովի տանը։
Օտար քաղաքներից պիտի են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» или Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ПОДПИСКА и ОБЪЯВЛЕНІЯ ежедневной армянской газеты «НОРЪ-ДАРЪ» принимаются **исключительно** въ конторѣ редакціи: Головинскій просп., домъ Зубалова, возлѣ помѣщенія Тифлисскаго Собранія.

Иногородные адресуютъ свои требованія: **ТИФЛИСЪ, ВЪ РЕДАКЦІЮ «НОРЪ-ДАРЪ»**.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բրանիկան.— Լուրեր։ Նամակ խմբագրին։

Թղթակցութիւններ.—Դիօրինից։ Քութայիսից։ Մոսկվայից։ Նամակ Թիւրքիայից.—Սամսոնից։

Քաղաքական.—Լուրեր։

Խառն—Լուրեր։

«Նոր-Դար»-ի հեռագիրները։

Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պ. Մկրտիչ Սանասարեանը բաժանորդ գրուելով «Նոր-Դար»-ին, ուղարկել է խմբագրութեան տոնձրնութեան 100 բուբլի, որպէս դի նրանի գումարին համապատասխան թուով «Նոր-Դար»-ի օրինակներ ուղարկենք պանդան տեղը։ Իւր բարեգործութիւնները արդէն յայտնի պ. Մ-Յանասարեանը յանկանում է, որ կարելոյն չափ չատ տարածուի «Նոր-Դար»-ը մեր ազգի մէջ։

—

ԵՐՈՒՍԱղԷՄԻՑ մեզ գրում են (դեկտ. 2-ին)։ «Քաղաքիս մէջ ջրի մեծ նեղութիւն կայ մինչև այժմ գրեթէ չէ անձրևած. մինչդեռ անցեալ տարի հոկտեմբերի կէսից անձրևները սկսեցին և կանոնաւոր կերպով չարունակեցին։ Եթէ տակաւին այս երաշտութիւնը չարունակէ, անտանելի պիտի լինի ժողովրդեան վիճակը, որովհետև այժմ փողով էլ դժուարութեամբ կը ճարուի ջուր։ Միայն մեր հոգոց վանքի ջուրը առատ է, և մէկ ամսէն աւելի է, որ քաղաքի հայոց ժողովրդեան չունեւոր դասի ջուրը վանքը կը մատակարարէ»։

—

ԵՐՈՒՍԱղԷՄԻՑ մեզ գրում են (դեկտ. 2-ին)։ «Քաղաքիս մէջ ջրի մեծ նեղութիւն կայ մինչև այժմ գրեթէ չէ անձրևած. մինչդեռ անցեալ տարի հոկտեմբերի կէսից անձրևները սկսեցին և կանոնաւոր կերպով չարունակեցին։ Եթէ տակաւին այս երաշտութիւնը չարունակէ, անտանելի պիտի լինի ժողովրդեան վիճակը, որովհետև այժմ փողով էլ դժուարութեամբ կը ճարուի ջուր։ Միայն մեր հոգոց վանքի ջուրը առատ է, և մէկ ամսէն աւելի է, որ քաղաքի հայոց ժողովրդեան չունեւոր դասի ջուրը վանքը կը մատակարարէ»։

—

Այս օրերս հայոց մի երիտասարդ ինժիներ աբ Տարին է խնդիրք պէտք է ներկայացնել, քաղաքումս անհրաժեշտական բիւրօ և նրան կից մի հասարակաց դրադարան բանալու իրաւունքը ստանալու համար։ Դրադարանը բազկացած պիտի լինի գլխաւորապէս հայոց, վրաց և ռուսաց գրքերից։ Դրադարանը պիտի աշխատէ ամեն կերպ օգտակար լինելու ընթերցող հասարակութեան և մասնաւորի։

Դրադարան այցելողը պիտի վճարէ մուտքի համար՝ 5 կոպէկ, իսկ դրադարանին բաժանորդը պիտի վճարէ 3 կոպէկ։ Այդ չնչին վճարով կբռնադարան չաճախող հասարակութիւնը պիտի տեսնէ և հայտնի նկարիչ Բաշինջաղեանի նորանոր նկարները, որ դրադարանին կից ի ցոյց հասարակութեան տրուած կը լինին միշտ։ Գեղ. նկարութիւնը գոհելի է և օգտակար. ցանկանում ենք լիուլի յաջողութիւն։

—

ԲՈՒԹԱՅԻՍԻՑ.—Դեկտ. 21-ին առաջին անգամ ձիւն եկաւ այստեղ և չքացաւ. ձեռը մեղմ է։

—Այստեղ ևս սկսուեցաւ հանդանակութիւն չօգուտ տրիլիսցի Չելեմունցի եղբայրներին արժ. Յովսէփ քհ. Ամիրաղեանցի նախաձեռնութեամբ։

—Դեկտ. 20-ին տեղիս «Քաղաւորական տանը» տեղական բարձր դասի ներկայացուցիչներից մի ժողով կայացաւ նախագահութեամբ և առաջնորդութեամբ պրինց գնեորալ պ. Օլդենբուրգի։ Ժողովի նպատակն էր հաստատել Բաքվում մշտական երաժշտական-գեղարուեստական ակումբ. այդ օրը մինչև 175 հոգի ստորագրեցան անդամ. Ստորագրութիւնը չարունակվում է։

—

Ուրբաթ, դեկտեմբերի 25-ին, քաղաքիս կաթոլիկ եկեղեցում մի վարդրիկ դէպք մեծ իրարանցում պատճառեց ժողովրդին։

Հարիւրաւոր ճրագներ վառուած էին եկեղեցում. սեղանի վերայ, կաթոլիկների սովորութեան համաձայն, ներկայացրած էր Քրիստոսի ծննդեան պատկերը՝ զարդարած անթիւ ճրագներով, դիրաւոր կատեներով և տարբ նիւթերով։ Դեռ պատարագը չէր վերջացել, երբ պատկերն զարդարող ճրագներից մինն վայր ընկնելով կրակեց իր չուրջ բոլոր դիւրավառ նիւթերը. ժողովուրդը խիտ մեծ բազմութեամբ խռնուած էր եկեղեցում. Յանկարծ «Հրդեհ» խօսքը սարսափելի արագութեամբ սարսռուկից եկեղեցու մէջ և իւրաքանչիւր ոք սկսաւ դիմել դէպի դուռը. սկսաւ սաստիկ իրարանցում, պղպղոց, չատ կանանց և աղջիկների սրտերն դնաց... Սակայն բարեբաղդաբար ամեն ինչ չատով անցկացաւ. դիւրավառ նիւթերն ապրեցան և անմիջապէս ձեռք առնուած միջոցներն արդիւք եղան կրակի տարածման.... Երեկոյեն կրկին հնչեց, խումբը երգից և ժողովուրդը կամաց կամաց ուշքի եկաւ. ամեն ինչ խաղաղեցաւ։

—

Հաչատարար պատուրի նախկին օրինչպէս լսելի է, մեզ գրում էր գիտութեամբ իւր կալքը կրակելու համար՝ որպէս զի հնար ունենար ստանալու իւր կալքերի ապահովագման գումարը) արդէն վերջացած է. Գործի սկզբնական քննութիւնն, «Кав»-ի տեղեկ, կազմած է երեք մեծ հատորներից և յանձնած է պրոկուրօրին։

—

ՍԱԼԵԱՆԻՑ դեկտեմբերի 20-ից գրում են.—Արանից 8—9 օր առաջ Չելվատում, Բաղրեանան պրիստաւութեան կառավարչի բակում, մի կառապած չեն մանկով կծում է մի 15 ամեայ երեխի ոտը, որ ի միջի այլ զաղթականների եկած է եղել Չելվատի գաւառը։ Շատ կծած տղան նոյն րդ ուղարկում են Բաքուի Միքայէլեան հիւանդանոցը, բայց այնտեղ մի ինչ-որ պատճառով չեն ընդունում նրան, այնպէս որ երեխան ստիպուած էր վերադառնալ Չելվատ, որտեղից նրան, կծուելու 6 րդ կամ 7-րդ օրը ուղարկում են Չելվատի գաւառի կառավարչի մօտ, որն իւր կարգին իսկոյն չանձնում է բժիշկ Աբամեանցին, որ ընդունելով տղին բժշկական ընդունարանում, միևնոյն ժամանակ հետազօտել կարզադրութիւն է խնդրում նահանգական բժշկից։

Ներկայումս հիւանդ տղան գտնվում է Չելվատի գաւառական բժ. Աբրամեանցի ընդունարանում, ուր պ. բժիշկը տղի վերայ գործ է ածում ժողովրդի մէջ գործածուող հաբը, որ բաղկացած է մանուչակից (Viola), արիւզևան նարդից (Radix nardi indicae), ոսպից (Semina Lentis), մալիսեան բզէզից (Milabris Armenicae) և մեղրից։

Այս միջոցն որպէս արմատական դեղ առաջարկուած էր Կովկասի Բժշկական Ընկերութեանը՝ Սալեանի մօլլա Ախունդ-Մօլլա-Ալի-Մաչադի-Խամսիլ օղլու կողմից. բայց յայտնի չէ, թէ ինչ էի Ընկերութիւնն լսածելով առաջարկուած բժշկական դեղը, նեղութիւն չքաշից նրան գործ դնելու ջրվախութեամբ վարակուած կենդանիներից մինն վերայ, հապա միայն քաւականացաւ իւր արձանագրութեան մէջ ապագրելով. մինչդեռ այդ մօլլան 70 տարեկանից աւելի է և 47 տարուց էլ աւելի է, որ գործ է դնում այդ հաբերն բժշկութեան համար՝ որ նրա ընտանիքի ժառանգական գաղանիքն է կազմում և նրա բոլոր բժշկութիւններն էլ աջողութիւն են ունեցել։

Կատաղած չան կծած տղին, ինչպէս հաղորդում են «Кав»-ին, բժշկում է ինքը մօլլան՝ բժ. Աբամեանցի անմիջական հսկողութեամբ, և կատարելապէս հաւատացած է բժշկութեան մասին։

—

Եզանակները վաղուց Կովկասում չքաղցն էլն և գեղեցիկ, որից չատ տեղեր ցանքսերն փչանալու վտանգի մէջ էին, իսկ չատ տեղեր էլ ծառերն կըրկին էլն ծաղկում. Վերջապէս հինգշաբթի, դեկտեմբերի 24-ին, եկաւ բաւական առատ ձիւն և ծածկեց ամեն ինչ իւր տակ։ Ինչպէս լսում է, ձիւնը միայն Թիֆլիսում չէ որ եկել է. Յանդրադարձերն կրկին լաւ են առանում, որ իրենց ցանքսերը չեն ոչընչանալ։

Պետական բարեարդը, օրէնդրական դեպարտամենտում և ընդհանուր ժողովի մէջ, քննելով ներքին գործերի մինիստրի առաջարկն փոխելու կարգադրութեան գլխով, որ իրաւունք է տալիս Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականական ընտրութիւններին անձամբ մասնակցելու, որոշեց, որ պաշտօններին համար անձամբ ընտրութիւն անելու իրաւունք ունենալու համար, Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականներն իրենց համար պէտք է ունենան տեղական մի կալուածագրի, որի վերայ ապրիլիս լինեն 25 տուն ժամանակաւոր պատասխանել զիւզացի, կամ 20 տուն՝ գիւղականների պայմանով, և կամ թէ,—Թիֆլիսի նահանգում ոչ պակաս քան երկու հարիւր լիտուն գեսեատինից չատ՝ իսկ Քութայիսի նահանգում ոչ պակաս 200 գեսեատինից. Թագաւոր Կայսրը հաճել է հաստատել այս և պատուիրել է գործադրել։

—

ԿԱԶԱՆՋԻԿԻՑ.—Արանից վեց ամիս առաջ, երբ այստեղ չատ փիչ ժողովուրդ կար, արհեստականներն օրերով պատում էին, որ մի որ և իցէ գնող պատահելով, կարողանային մի փոքր առևտուր անել։ Սակայն երբ տեղիս ժողովուրդն էլ սկսաւ բազմանալ, այն միջոցին ևս ոչինչ օգուտ ունեցան, որովհետև չատացան և առևտրականների թիւը, որոնք սկսան միմեանց հետ մրցել։ Այդ մրցութիւնն այնտեղ հասաւ, որ առևտրականների մէջ չմնաց մինն, որ մի փոքր նաղդ փողով առևտուր անէր, այլ բոլոր գործերն էլ լինում էին պարտքով։ Որպէս զի ձեզ մի գաղափար տամ, թէ որտեղ է հասել այդ պարտքի առևտուրը, լիշեմ մի ամինափոքր դէպք.—դեկտեմբերի 21-ին մի տիկին մտնելով հացավաճառի մօտ, պահանջում է ձրի հաց։ Հացավաճառը մերժում է, բայց տիկինն առանց լսելու նրան, վեր է առնում հացն ու «կորիր,

բեզ ով է մարիկ անում» ասելով, հեռանում իանութից։ Սակայն հացավաճառն հանդարտելով ետևից, տալիս կարողանում է զօրով ետ առնել իւր ապրանքը։

Ահա մեր դրութիւնը. ասմ ուր է հասցրել մեզ մեր չհամաձիւնը։

—

Օրեսանի գաւառական ղէմստվոյին ժողովն որոշեց խնդրամատոյց լինել Թուլատութիւն ստանալու՝ որպէս զի մեծ գիւղական ուսումնարանների մասերքում ժողովրդի համար ընթերցարաններ կազմեն. ժողովրդական կրթութեան մինիստրութեան պ. մինիստրը տեղեկացրեց Օրեսանի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան, որ ներքին գործերի մինիստրութեան և սինոդի օբեր-պրոկուրօրի հետ համաձայնելով, հնարաւոր չէ համարել այդ Թուլատութիւնն տալու։

—

Դեկտեմբերի 26 ին, Թիֆլիսի գաւառական պալատը քննելով Յոյխվատի գիւղի բնակիչ Սպիրիդոն Խանիով Չիլիչվիլի գործը, որ մեղադրվում էր իւր հօրը, եղբօրը, եղբօր կնոջն ու նրա որդուն թունաւորելու փորձ անելում՝ իւր նոր ժառանգութիւնն ստանալու նպատակով, մեղադարը գտաւ նրան և որոշեց 20 տարուայ աժաժանակիր աշ-

—

Քաղաքիս ջրմուղը, ինչպէս երեսում է, չպիտի հանգիստ մնայ. օր չ անցնում, որ ջրմուղի այս կամ այն խողովակներից մինը չտրաքուի։ Այսպէս, օրինակ, դեկտեմբերի 23-ին էլ պատահեցաւ Նոր-Արեանդեան և Կրասնօգորսկի փողոցներից անցնող ջրմուղի կեպրեանական 6 վերշոկ տրամագծանոց խողովակը։ Պատահած խողովակից ջուրն տասնեակ ժամը 10-ից չորեքնակ հասելով մինչև երեկոյեան ժամը 4, քանդում է խողովակի դէմ գտնուղ ինժինէր պ. Գրիգորեանցի տան պատը և լցվում է ներս. Ջուրը մօտ կէս արշին կանգնում է տանը։ Ջրմուղի պատահած խողովակի քննութիւնն ցոյց է տուել, որ պատահածքն առաջացել է խողովակի պատերի հետևանք ներքին թերութիւն չունենալուց։

—

ՔՈՒԹԱՅԻՍԻՑ.—Արդէն մի ամիս է, որ ապտեղ սիրում է մի տեսակ մանկական հազ, գոնէր դեռ չեն եղել։

—Մինչև անցեալ 85 թիւը Քութայիսում հրատարակվում էին «Երգաս» և «Բիբլիոտեկա» վրացերէն թերթերը, իսկ այսօր և ոչ մինը։ Այժմս հրատարակվում է մի ռուսերէն չաբաթաթերթ միայն. մեր կարծիքով առաւել լաւ և օգտակար կը լինէր, եթէ նոյն թերթը վրացերէն լեզուով էլ հրատարակուէր։

—

Դեկտեմբերի 22-ին, Կովկասի կառավարչապետի խորհրդում, «Кав.»-ի ասելով, և հետևեալ գործերն են քննուել. գինուորական վարչութեան զեմսվոյի միջոցներից Թիֆլիսում պատուհրի պատուաստման բաժանում պահելու մասին. Նոմիանէրի գետի վերայ կամրջ չինելու համար 5,941 ր. 17 կ. նշանակելու մասին. Լաչանէուրի գետի վերայ, Օրբելի գիւղում,

համարջ չինելու համար 2,711 ր. 14 կ. նշանակելու մասին. Արզիլինի շրջանի Սինդօսեան բանեում կատարի կալարան չինելու համար 2,344 ր 66 կ. նշանակելու մասին։

—

«C. Her. Bl.»-ին հաղորդում է, որ Նոյեմբերիսկի (Օկեոսկի) համալսարանի վարչութիւնն որոշելով, անկարգութիւններին մասնակցելու համար համալսարանից պիտի արտաքսուին հինգ հոգի՝ առանց սրբիչ համալսարաններ մանելու իրաւունքի, հինգ հոգի սրբիչ բարձրագոյն ուսումնարաններ մանելու իրաւունքով, և 20 հոգի էլ համարվում են հետապրած համալսարանից։

—

Դեկտեմբերի 25-ին զաղարեցրած են Թիֆլիսի բոլոր ուսումնարաններում ուսումնարանական պարապմունքները։ Դասերը կ'սկսուեն առաջիկայ 1888 թ. յունվարի 7 իցն։

—

Թիֆլիսի Քաղ. Վարչութեան ֆինանսների յանձնաժողովը, քննելով քաղաքիս առաջիկայ 1888 թուի նշումանի հաշուեկշռի մեծ մասը, ի միջի այլոց ուշադրութիւն է դարձրել այն բանի վերայ, որ պէտք է Քաղ. Վարչութեան մէջ ծառայողների թիւը նկատելի չափով նուազացնել։

—

Անգլիական երկաթուղու Սանդալա կայարանից հաղորդում են, որ դեկտեմբերի 22-ին, այդ կայարանն ուղևորող գնացքում եղող կալանաւորները, ցերեկուայ ժամը 2½-ին, խռովութիւն բարձրացնելով, դուրս են թռչում գնացքից և փախչում են։ Բոլոր փախչողների թիւն է 21։ Կալանաւորների և պահապանների մէջ վիրաւորուածներ կան։ Փախստականներին ձերբակալելու համար, «Кав.»-ի տեղեկ. միջոցների են ձեռնարկել։

Պետերբուրգ, Կիևից, Օկա, Կամա գետերի և նրանց ճիւղերի վերայ հաստատած է չորեքաստիճ մի ընկերութիւն «Եղբ. Մերկուլով» անունով։

—

Սկսել են «Ruvue Commerciale indusrielle du Caucase» կիսամսեայ թերթի 6-րդ համարը։ Այս համարի մէջ մի քանի ֆրանսերէն յօդուածների հետ կայ և «Акцизъ на керосинъ» խորագրով հետաքրքրական յօդուած։

—

Փերբիայից, Եւրոպայի զանազան կողմերից, Ամերիկայից և այլ հեռաւոր երկրներից «Նոր-Դար»-ին բաժանորդ գրուողը պէտք է վճարէ տարեկան 30 ֆրանկ։ Բաժանորդագրութիւնը հաստատուել 1888 թուականի համար միայն ուրախութեամբ կ'ընդունուի, որ յաղորդողները իրանց յանկութիւնը յայտնեն յառաջիկայ յունուարի 1-ից առաջ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մեծարգոյ Խմբագիր. Յարիցինից մի անգամ ուզարկել էի պատասխան «Նոր-Դար»-ի խմբագրութեան մի քանի պարոնների մէջ հանգամանալի մի գումար բարի նպատակի համար, խնդրելով, որ այդ գումարը Դուք, Ներկայիս գործադրելու համար՝ ուզարկէք ում անկ է և հրատարակէք այդ մասին «Նոր-Դար»-ի էջերից մէկում։ Այնուհետև առաջ Ձեզանից մի ապահովագրած նամակ, որի մէջ յայտնում էիք, որ անկարող էք իմ խրնդրածը կատարելու և մի առ մի գրում էիք գրա պատճառները և խնդրում էիք, որ փողն մասին ևս անօրինութիւն անեմ։ Գործերով զբաղուած՝ չկարողացայ ես նամակով պատասխանել Ձեզ. մտածելի, որ կը գամ Թիֆլիս և անձամբ կը տեղեկանամ ինչ հարկաւորն է։ Ձիշտ էր, Մեծապատիւ Խմբագիր, որ ու. Կրասիլնիկեանի հետ գալով Ձեր խմբագրատունը, իմ ուղարկած գումարի մասին Ձեզ հետ ունեցած խոսակցութեան ժամանակ, հակառակ Ձեր առաջարկութեան՝ չկամեցայ ձեռ առնել գումարը, այլ խնդրեցի, որ այդ գումարը մնայ «Նոր-Դար»-ի խմբագրութեան մէջ, մինչև որ ես մի ուրիշ բարի նպատակի համար զործ դնելու որոշումն անեմ։

Ազնուական գործերից տպիսուած Կատաստանի զանազան քաղաքներում ճանապարհորդելով անընդհատ բարեկամների նամակներից իմացայ, որ այդ գումարի առթիւ Ձեզ դէմ մամուլի մէջ ակնարկութիւններ են եղել։

Շատ յուսում եմ, որ իմ զանցառութիւնս պատճառով թոյլ են տուել Ձեզ դէմ չարձակուելու վատաբար և ան՝ իմ անունով։ *)

Այժմ, Մեծ. Խմբագիր, Ձեր խմբագրութեանը պահ տուած 268 րուբլի գումարի հաշուով խնդրում եմ ուզարկէք զանազան տեղեր, առաջիկայ 1888 թուականի համար «Նոր-Դար»-ից տիքան օրինակ, որքան համապատասխան է ձիշտ գումարին։

«Նոր-Դար»-ի տարածուելը լուսաւորութեան կարօտ վայրերում ևս ամենալաւ գործերից մինն եմ համարում և կը ցանկալի, որ «Նոր-Դար»-ը տասնապատիկ իրաքանչիւր հայ։

Մնամ Ձեր մտերիմ բարեկամ և ալն

Համբարձում Մելիքեանց

Մոսկուա
12 դեկտեմբ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՕՐԻՍ, 9 դեկտեմբերի.— Դեռ ևս մեր մէջ, մանաւանդ պիւրօկրատ, քաղաքային պարապականութիւնը կայանում է ինչ նրանում, որ նա առաւօտները և երեկոները ժամ է տալիս, իսկ կեսօրից յետոյ պարապում է ինչ-ինչ անհասկանալի գործերով, որոնց մասին ոչ ոք ոչինչ չգիտէ։ Ինչպէս կարող էր անել այդ տարօրինակ զօրութիւնը։

Ուսումնարաններ են բանում, որ ժողովուրդը կրթուի, զարգացնուի մտաւորապէս, բարոյապէս և ֆիզիքապէս, նրա դրութիւնը բարւոքուի ուսման միջոցով, մի խօսքով՝ հոգևոր և մարմնաւոր պէտքերը հագել են ուզում, իսկ կարծես դիտմամբ այդ բոլորին հակառակ նոյն ժողովուրդը չանձնում են մի տպէս հոգևոր հովուի, որ կարծում է ուսումնարանի նպատակների հակառակ և չատ անգամ պատճառ է գառնում անդի ուսուցչին խափանուելուն... Կարծեմ ժամանակ է վերջ տալ այսպիսի քանանների բազմանալուն, ժամանակ է այդպիսիների անունների ցուցակի վերջացնել և հանգստանալ, որ այդպիսի մարդիկ քանանալ չեն կարող...

Բայց կան դեռ ևս այնպիսի մարդիկ, որ աշխատում են ժողովրդի հովիւ լինել, ժողովրդի հոգևոր հայր լինել, առանց մի որ և իցէ պատրաստութեան, առանց մի որ և իցէ արժանաւորութեան, կարծելով թէ քահանայական ծանր լուծը կարող են կրել իրենց հասս վզերի վերայ... Այդպիսի մի անձնասուրութիւն պանծում է Սիմէոնը, որը նոյնպէս պատրաստուում է քահանայ լինելու, որ և առիթ առնէ այս թղթակցութեան։ Դա մի քաղաքն է, քաղաքն է հինգ տարեկան մարդ է, որ անցել է բոլոր խարդախութեան չկոլան, որի աչ թեւը կրում է նրա-տաղեմի դրօշմը (երևի հենց այս բաննէ նրան իրաւունք տալիս քահանայ լինելու), քաղաքն է հինգ տարեկան տասակում այս քանի օրերս նշանակել է մի փոքր տարեկան տղկալ վերայ։ (Եթէ, Աստուած մի արասցէ, նա քահանայ գառնայ՝ այսպիսի նշանագրութիւններ առած կանենայ)։

Տղմատութիւն կոմիից, մինչև իսկ քահանայ պատրաստելու համար, ինչպէս նկատել է ոչ ոք, չունի մարքերին, ոչխարի և ուրիշ պատրաստ են սար ու ձոր և ամեն մի մասուռ, խաչի առաջ, որտեղ լիքն է մեր նախահարց երկիրը, մի մի պատարագ են անում երգում են պատարագի բոլոր արարողութիւնը... Այդ հովիւ ախրացանները գնել ազատ են այն բոլոր խաչազողական ապրանքներից, որոնք չատուկ են մեր վերի վիշած 10 տարեկան աղջկայ վերայ նշանուած քահանայացուից։ Այսպիսի մարդիկ զանազան մոլի միջոցներով և ճանապարհներով տարագրութիւն են տանում տպէս ժողովրդից, որ չատ անգամ չէ իմանում-ինչ բանի է համաձայնութիւն տալիս, իսկ դրանք կեղծ տարագրութիւնը առած գնում են և մի քանի ժամանակից վատ քահանայ գարձած գալիս են նոյն ժողովրդը հալածելու... Բայց մեծ հոգևոր իշխանութիւնը միայն նրա առաջարկած տարագրութիւնով պէտք բաւականալ և չպէտք է աշխատէ տուղը իմանալու... ժամանակ է, այո, ժամանակ է արժանաւոր քահանաների մասին մտածելու... ժամանակ է վատերին վերջ տալու։

Ուշնալով այսպիսի տպէս քահանաներ, և մենք դեռ ևս զանգատում ենք կաթոլիկ և բողոքական կղերներից, որոնք առատ հունձ են ունենում հայ տպէս ժողովրդի մէջ, որոնք առանց արդելքի չարաչարում են մեր մէջ հաստատուելութիւնը։ Ո՞ր քահանան ընդդիմադրից կաթոլիկ պատերին, որ քահանան մեզ «հերձուածող և հերետիկոս» անուանող բողոքական պատարի դէմ հանդիման կացած և ապացուցեց նրան իր չարաչար սխալմունքը... Ե-թէ մի տեղ միսիոնարները մուտք չեն գտնում, դա էլ ժողովրդի «տանարն» է, որ վերին բնազդմամբ պահպանում է իր և իր պատկերի հատատը։

Ա. Շ.

ԹԻՖԼԻՍ, 22 դեկտեմբերի.— Կովկասի պաղատաւ երկիրներից մինն էլ Իմերէթն է։ Իմերէթը ի հնուց ցուհատանի ծանօթ երկիրներից մէկն էր։ Արտաքոյ պատմագրի ասելով, յոյներն իրենց առաջատուր նաւերով գալիս էին մինչև Կօլխիդայի երկիրը, որտեղից տանում էին մեծ քանակութեամբ ընդեղէններ, բամբակ և մետաքս։ Այժմ էլ Իմերէթը թէև Ռուսատան է թէ Կովկասի միւս քաղաքներն պակաս արտադրութիւններ չէ ուղարկում։ Արդէն եօթը տարի է, որ Իմերէթից զանազան մանր վաճառականներ հոպարատոր պուդ եպիպատացորեն են տանում Բեթոպա։

Իմերէթը բնութիւնից վարձատրուած է չատպատար։ Նա իր ծոցում կրում է մշանջենական, հարուստ բարձրութիւն հսկայական լեռներ, արտացրում է մեծ քանակութեամբ եպիպատացորեն, բամբակ և մետաքս։ Թէև մինչև այսօր պինու արտադրութեամբ էլ էր գովուած Իմերէթը, բայց այսօր բոլոր ապրինների տեղերն ընկնելով գութանի և ցաքանի տակը՝ պինու քանակութեան չափը օր աւուր նուազում է։

Երբ առաջին անգամ փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գիծն անցկացաւ ամբողջ Իմերէթի միջով, տեղացիները թէև արանջում էին, բայց տանապատիկ տուել են օգտուելան, ընդարձակ միջոց տանալով արտահանելու երկրի արտադրութիւնները։ Մեզանից չատերը լիշում են, որ երբ դեռ Ութան գետով, փոքրիկ մակոյկներով նաւում էին Օրպիրի միջով դէպի Փոթի նաւահանգիստը, այն ժամանակ ևս բաւական օգուտներ էին տանում իմերէթները. բայց այսօր արդէն պրոպագնները փոխարինում են և երկրագործութեան տալիս երկաթուղուն և նրա հնարաւորին։

Չնայելով որ Իմերէթում և իւր բնական տեղեր կան, բայց երկրի գաւառներն դեռ ևս օրինաւոր ուշադրութիւն չեն գարձրել այդ բանի վերայ։ Մինչդեռ միւս կողմից օր աւուր, ինչպէս տեսնում ենք, երկաթուղու չնորհիւ օտարներն կամաց կամաց մօտենում են այս երկրի բնական արդիւնքներին և աշխատում են ամեն գներով իրենց ձեռքը ձգել տեղական կալուածատէրների ձեռքում անդործ պարելի մնացող հարստութիւններն։

Իմերէթն օր-աւուր բարգաւաճում է և առաջ է գնում իւր կենսական պայմանների։ Այսօր նշմարելի կերպով, բոլոր նրա խոշոր արտադրին առևտուրը օտարների ձեռքն է, իսկ ներքին առևտուրը վերսկսել հրկաների ձանկն է ընկնում։ Տարատպարար իւր գաւակներին կարծես վճռած է միայն վաստել իրենց ունեցածն և անաչառութեամբ ու գիտութեամբ պարապել։ Շատ տխուր երեւոյթ է դա։

Հ—ի

ՄՈՍԿՎԱ, 17 դեկտեմբերի. — Ամենապատկ գեղարուեստը մեր մէջ առանձնանալանձելի դրութեան մէջ է և նա մի ողբալի պատկեր է ներկայացնում մեր արդի ապրումին գեղարուեստական կեանքում։ Գեղարուեստը մինչև օրս գտնապարելի անուշադրութեան է եղել մատնուած մեզանում, նրա զարգացման, նրա ծաղկման համար ոչինչ նշանաւոր հոգս, ոչինչ ջանք գործ չէ դրուած մեր կողմից. մենք միշտ ստանապրա և անտարբեր ենք եղել գէպի նա և, այդ բանական չէ, հայ ժողովրդը միշտ մի տեսակ խոկ և ատրօրինակ հատկացուցութիւն է ունեցել գեղարուեստի մասին, միշտ կատարապատ հայեացքով է նայել նրա օգտաէատութեան, նրա զարգացման անհրաժեշտութեան վերայ։ Ի հարկէ դա մի չատ ցաւալի երեւոյթ է, և ամեն անգամ, երբ պատահել է մեզ լսել որ և է օտարազգի նշանաւոր երգչի կամ երգչուհու, երաժշտի կամ երաժշտուհու, անունէ օտարազգի երեւելի գեղատանի խաղը կամ չալանի նկարչի տեսիլքները—հոգիս սիրել է չափազանց, հպարտասոր գոռն մատածմանքներ պատրաստել են մեզ և ծնունդ են գանագան տարօրինակ թէ՝ արդեօք ինչի հաշ ժողովրդը, հաշ ազգը նոյնպէս չէ ծնուում, առաջ չէ բերում ոչնչ բաց-ծալիք և ալսպիսի փայլուն տաղանդներ, ալսպիսի հարուստ ձիրքերով օժտուած մարդիկ։ Ինչի, միթէ հաշ ժողովրդն այնքան անընդունակ, այնքան անչնորհ է. կամ միթէ բնութիւնն այնքան ադնարտար և անիրաւ է գտնուել, որ հաւին տաղաւին զրկել է իւր թանկագին պարգեներից. չէ տուել նրան ոչ ձիրք, ոչ տաղանդ, ոչ չնորհ, որ նա ևս կարողանար երեսել գեղարուեստական տաղարուեստի վերայ. փայլէր և փայլեցնէր իւր՝ ազգի անունը, գօրաւիզ և ապաշխարող հանդիսանար գեղարուեստի զարգացմանը և ծաղկմանը ազգի մէջ... Սակայն միշտ էլ այն պարզ և ակնհայտ կարծիքին ենք հանգել, որ մեր մէջ ևս ծնունդ են բազմաթիւ տաղանդներ, չնորհալի մարդիկ, որ հայն նոյնպէս պարգեում է բնութիւնից ձիրք, չնորհ, ընդունակութիւն, միտք, տաղ, տաղանդ չկայ տակ գնալու, կատարելագործուելու, մեր մէջ քարոզական և մէկ, ճանաչողի, մտաւոր կեանքի պահանջներն չատ աննախանձելի պատկեր են ներկայացնում և այդ պատճառով նա, հայը մտանում է անչափահասութեան, անպատրաստ և անհոգի՝ կոչուում են նրա բոլոր բնատուր պարգեները։

Սակայն, փառը Աստուծոյ, չէ կարելի ի սրտէ վստահալ և չհրճուիլ, որ վերջին ժամանակներս մեր մէջ ևս կամաց-կամաց սրբենատում է սէր դէպի գեղարուեստը, մեր մէջ ևս երեան են գալիս մարդիկ, ի սրտէ նախրատած գեղարուեստին, որոնք երկրիի հատատատութեամբ գիմատրելով ամեն տեսակ խոչընդոտների, աչխատում, չարչարուում, տանջ ձիգ քատում են հասիքի մէջ ևս գարգացնելու գեղարուեստական ճաշակ, հային ևս գրգռել տաչք գարձնել հայկական գեղարուեստի գարգացման և ծաղկման վերայ։ Ինչն բուռ բնութեան հատատանալի է, թէ որքան գիտատար և ծանր է որևէ արտատատ կամ գիտութեան, առհատարակ որևէ նոր գործի ներմուծութեան և տարածման ձեռնարկից. սկզբնատատառ հանդիսանալ որև է ազգի կամ ժողովրդի մէջ, ինքնըստինքեան հատկանալի է, թէ որքան դժուար է այդ

ՀՈՒՇԱՐՁԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՍՏԱՑՈՂ ՀԱՍՑԵ — ՀԱՍՑԵ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Հրդի որոշումն 22 նահանգներում հողային պետական հարկն աւելացնելու մասին։ Հետևեալ միջին չափի տուրքն է դրուած յարմարաւոր հողի և անտառի իւրաքանչիւր դեսետինի վերայ.—Օլոնեցկի նահանգում $^1/_2$ կ., Օրէնբուրգի, Պերմի, Նովգորոդի և Վօլոգդայի նահանգներում—1 կ., Կոստրոմայի, Մօգիլեվի և Սմոլէնսկի նահանգներում—2 կ., Պսկովի, Մինսկի, Պետերբուրգի և Վիտեբսկի նահ.—$2^1/_2$ կ., Տվերի՝—$3^1/_2$ կ., Էստլանդիայում—3 կ., Սամար սլում—4 կ., Վիլնայի, Նիժեգորոդի և Եկատերինոսլավի նահ.—$6^1/_2$ կ., Խերսոնի և Դրսկնոյի նահ.—$7^1/_2$ կ., Լիֆլիանդիայում—10 կ. և Կուրլիանդիայում—15 կոպէկ։ Այս տուրքը կը սկսեն վերցնել 1888 թուից։ Հրատարակուած է նոյնպէս և 1888 թուին քաղաքների, գիւղերի և շէնների անշարժ կալքերից վերցնելու ուղղած դատարկներն՝ նահանգների և գաւառների վերայ բաժանած։ Հարկի ընդհանուր գումարն որոշուած է 6,498,100 րուբլի։ Ամենամեծ թիւ գալիս է Պետերբուրգի նահանգի վերայ—1,020,900 ր., Մոսկվայի 969,000 ր., Խերսոնի վերայ—349,600 րուբլի։

Լրագիրները հաղորդում են, որ երկաւշաթի, պետական խորհուրդը հաստատել է լուցկու վերայ դնելու հարկը։

ՎԻՆՆԱ.—Աւստրիական գինուորական գործակալ Զաւեվը վերադարձաւ իւր պաշտօնատեղին խաղաղասիրական յայտարարութիւններով, որ շատ լաւ ազդուրութիւն գործեց։

ԿԵՕԼՆ.— «Keoln. Zeit.»-ը հաղորդում է, որ նոր տարուայ առթիւ Վիլհելմ կայսրին ուղարկուած հեռագրի մէջ աւստրիական կայսրն ասում է. «Աստուած տայ, շնորհով սարգուէը քաղաքական դրութիւնը, որպէս զի մեր հպատակներն կարողանային խաղաղութեան բարիքով»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

23 Դեկտեմբերի։

Լօնդոն $20^{15}/_{16}$, $21^3/_{32}$.
Համբուրգ $177^3/_4$, $178^1/_8$.
Պարիզ $222^1/_2$, 223.
Պօլուիմպերիալ 9 ր. 12 կ. սակ.
Մաքս. կուպօն. 182 ր. — կ. սակ.
Արծաթ . . . . 1 ր. 33 կ. սակ.
Բօրսային դիս. $5^1/_8$ և $7^0/_0$.
Պետակ. բանկի $5^0/_0$
1-ին չրջանի $99^3/_4$ ր. — կ. սակ.
2-րդ . . . . 98 ր. — կ. սակ.
3-րդ . . . . $97^3/_4$ ր. — կ. սակ.
4 րդ . . . . $97^3/_4$ ր. — կ. սակ.
5-րդ . . . . $97^3/_4$ ր. — կ. սակ.
Վերջին $4^0/_0$ — փոխառութիւնը . . . $82^1/_4$ ր. — կ. սակ.
100 և 1000 արեւելեան փոխառութեան $5^0/_0$ տոմսեր,
1-ին չրջանի $97^3/_4$ ր. — կ. սակ.
2-րդ . . . . $97^1/_2$ ր. — կ. սակ.
3-րդ . . . . $97^1/_4$ ր. — կ. սակ.
Առաջին $5^0/_0$ նեղբին փոխառութեան $5^0/_0$ տանոզ դոմարի տոմսեր . . . . $275^3/_4$ ր. —կ. սակ.
2 րդ . . . . 250 ր. — կ. սակ.
$5^1/_2{}^0/_0$ բենառը . 103 ր. — կ. սակ.
Ոսկէ բլետ. . . $194^1/_2$ ր. — կ. սակ.
Թիֆ. քաղաք. վարկի բնկերը. օբլիգ. . . . —
Պետերբուրգի բօրսայի արամադրութիւնը հաստատուն է։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի տրապարակի վերայ վաճառականաց ապրանքների ընթացիկ գներն՝ Դեկտեմբերի 25—26 ին։

ՅՈՐՆՈ.—Գուանոյի պուդը . 1 — 5 կ.
,, Գանձակի ,, . . 1 — — ,,
,, Նոբազալի ,, . . . — 90 ,,
,, Նուխու ,, . . 1 — — ,,
ԱԼԻՒՐ.—Գուանոյի պուդը . . 1 — 40 ,,
,, Գանձակի ,, . . . 1 — 20 ,,
,, Նոբազալի ,, . . . 1 — 30 ,,
,, Խաշն ասատկները . . . 1 — 20 ,,
ԳԱՐԻ.—Սպիտակը . . . . . — 60 ,,
,, Սևը . . . . . — 65 ,,
ԲՐԻՆՁ.—Ամբալայ . . . . 2 ր. 40—50 ,,
,, Նուխու . . . . . 1 — 75 ,,
,, Խաշն ասատկները . 1 ր. —65 ,,
ԱՂ.—Ուռախայի . . . . . 35 ,,
,, Կորկի . . . . . 65 ,,
,, Կազգանի (գալիք . . 40—45 ,,
,, Կազգանի (հասը . . . չհայ
,, Բագուի ,, . . . 21 ,,
ԻԿՂ.—Օղնայի . . . . . 10 ր. — ,,
,, Նեժինգորոդի . . . . 10 — 50 ,,
ՄԱՔՈՒՐ ԿԱՐԱՊ . . . . . 9 ր. — ,,
ՁԻԹ.—Ներքսախառ . . . . . 7 — 40 ,,
,, Նուխու . . . . . չհայ
,, Պէհլեայի . . . . . 3 — 90 ,,
,, Զիմոպոլի . . . . . 11 — — ,,
ՃՐԱԳՈՒՈ.—Չհալած. . . . . 2 — 40 ,,
,, Հալած . . . . . 4 — — ,,
ՆԱՒԹ.—Չհան. գործածականներից . — — ,,
,, Ներքին ծախս.
,, հայաբանում . . . 42—43 ,,
,, Քաղաքում . . . . 50—55 ,,
ՄՈՄ.—Կերոսոլինիկի . . . 9 — 40 ,,
,, Օղնայի . . . . . 8 — 50 ,,
Տօլմի գործ. 4—5-նոց 9 ր. 6—8-նոց 10—40 ,,
ՈՍԿՈՒ.—Տօլ. գործ. 1 տետ. . . 3 — 80 ,,
,, ,, ,, 2 ,, . . 2 — 50 ,,
,, ,, ,, 3 ,, . . 2 — — ,,
,, ,, ,, Մարմարիճնի 2 — 60 ,,
,, ,, ,, 1 և կէս փութոց 3 — 20 ,,
ԼՈՒՑԿԻ (ապիկա) Օսիպովի,
,, հաշտիկ . . 4 — — ,,
,, Վօլոկով . . . 3 — 90 ,,
,, Կարմիր 300-անոց ,, 46 — — ,,
,, Օղնայի . . 44 — — ,,
,, Կաբինետի ,, 44 — — ,,
,, Սպիտակ-դուլա Սպառած, ապառվում է.
ՇԱՔԱՐ.—Բօզակի . . չհայ ապառվում է.
,, Գնիման մեծագլուխ . 5 ր. — 90 ,, Թոյլ
,, ,, Մանրագլուխ 6 ր. 10 — ,,
,, Զերկիսկի . . . . 5 — 90 ,,
,, Կարատ . . . . . 6 — — ,,
ՇԱՔԱՐԱԻԱՋ.—Օղնայի . . 5 ր. 10—15 ,,
ԴԱՐԱՄԵԼ.—Շապօշնիկովի
ժեսաի արկղում 7 60—50 ,,
,, ,, վայտի արկղում 5 — 80 ,,
,, Պօլհակովի
ժեսաի արկղ. 7 50—40 ,,
,, ,, վայտի արկղ. 5 — 70 ,,
ՄԱԿԱՐՕՆ.—Օղնայի . . . 4 — 40 ,,
,, Սամարայի . . . 4 — 60 ,,
ԿՕՖԻ.—Մօքքօ . . . . . 29 — — ,,
Երկարդ տետակ . . . 27 — — ,,
,, Բիօ . . . . . 25 — — ,,
ԿԻՆԱՄՈՆ (գաբչին) . . . . 11 — 80 ,,
ՊՂՊՁՂ.—Արևպաֆօրիս . . . 22 — 50 ,,
ԿՈՃԱՊՂՊՁՂ. (կրճ) Սպիտակը . 16 — 20 ,,
,, Մոխրագոյնը 9 20 — ,,
,, Դեղինը . . 4 — 80 ,,
ՊԱՂԼԵՂ. (շիլ) . . . . . 2 — — ,,
ԱՐՋԱՍՊ (գաղ) . . . . . 1 — 20 ,,
ՆՇՈՒՄՔ (քաւքաւթ) . . . . 2 — 70 ,,
ԽՈՒՆԿ.—Սպիտակը . . . . 15 — — ,,
,, Սևը . . . . . 8 — 50 ,,
ԿԼԱՅԵՆ . . . . . 32 ր. — ,, սակաւ
ՕՇԻՆԴՐ (հշտիկը) . . 9 ր. 50 ,, սակաւ
ՅԻՆԿ (վառօվօյ) . . . . . — — ,,
ՊՈՂՊԱՏ.—Մնդուկը . . 24 ր. 50—25 ր.
ՍՊԻՏԱԿ ԹԻԹԵՂ. (ժեսա) . . 17 — — ,, Սակաւ։

ՁԱՄԻՋ (Սառա) քանկինը . . 2 — 90 ,,
,, Մոդաւկինը 3 — 10 ,,
ԳՈՒԻՇ. . . . . 14 — 80 ,,
ԿԱՂԻՆ (ախիլ) . . . . . 4 — 45 ,,
ՇԱԳԱՆԱԿ . . . . . 1 70—35 ,,
ԸՆԿՈՑՋ . . . . . 1 — 40 ,,
ՕՂԼԻՆ.—Առանց տակառի . . — ,,
ՍՊԻՐՏԸ.—Տակառով . . . . — ,,
ՄՈՐՔ.—Ոչխարի (Մաբ. Համաք) զոյգը 90 ,,
,, (Օդեա. Համաք 1 ր. 1 — 10 կ.
Առևտուրը չափազանց լիայլ. պահանջ բնդհատ չկայ.
,, Այծի . . . . . 1 — 50 ,,
,, ,, Ընտրովի . . . 2 — 40 ,,
ՏԱՎԱՐԻ ԿԱՇԻՆ . . . . . 7 — 50 ր.
Մասեալի Տանախկին — — կ.
Շէյտան . . . . . — — ,,
ԲՈՒՐԴ.—Թուշի վրայ . . . — — ,,
,, Գանձակի . . . — — ,,
,, Դաղստանի չհայ
,, Շեկու . . . . . — — ,,
,, Դաղստանի . . . . — — ,,
,, Նուխու . . . . . — — ,,
,, Խոշտանի . . . . . — — ,,
ԲԱՄԲԱԿ.—Երևանի . . . .
,, Ամբերկայի ախտիկ . 9—9—50 ,,
,, Դաղստանի ախտիկ . 8—80—60 ,,
ՄԱՆԱՆՋ . . . . . 12 — — ,,
ԲՈՒԺՈՒ.—Նուխու չհայ
,, Խմիչեվի . . . . — — ,,
ԹԵԼ.—Կախվիճ . . . . . — — ,,
ԼԱԱՍ (ֆրիզն) . . . . . — — ,,
ԹԻՑ—Կ. և Ս. Կ. ու Ս.) Պագալ եղջերց Ամեն տեսակի համար գնդ % 10
ԹԻԱԼՈՈՏ.—Նուշնաբերվի Պատերաս.
1-ին և 2-րդ տեսակ գնդ. 24% Թամբաքոս 1-ին և 2-րդ տեսակի համար գնդ % 18 կ. 3-րդ տեսակի համար % 15 կ. } ապառած ապառվում
Բօղաչնականի ամեն տեսակի համար գնդ % 20 կ.
ԿԱՐԵՇԿԱ.—Ծալինի պուդը 8 ր. — կ.*)
» Գիմախոտ » 7 ր. 20 »
» Բիմաբինկոյի » 9 ր. 10 »
ԽԱՂԱՓՈՒՂԻ կտոր . . . 5 ր. 50 »
ՈՍԿԻՆ.—Պալնգնի բլայը 9 ր. 60—70 կ. բիչ.
,, Բաջախլուն սպառուած
,, Օամանեան լիքան . 10 ր. 45—50 ,,
ԱՐԾԱԹ—Բաբլանոց . . 1 ր. 32—35 ,,
,, 20-կոպէկանոց . . 1 ր. 20—22 ,,

* Անդրկովկասեան երկաթուղու նոյեմբերի 15-ի նոր կարգադրութեամբ կաբեշկին վրանտակի երկրորդ կարգի վերցնում է առաջին կարգի, որով ապրանքի գինը բարձրացել է։

ԱՐԺԵՑՈՒՄՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ Առևտր. բանկի ակցիան —290 ր.
,, Քաղաքային ,, ,, 82 ր. 25 ,,
,, Ագուստանենների կալուածական բանկի զբաւական տոմսը (Закладной листъ) բազ. 96 ր. 50 ,,
ՔՈՒԹԱԻՍԻՍ բանկի նոյն տոմսը բազ. 98 ր.
Պրիվատն . . . . . 98 ր.
ՏՈՄՍԵՐ.—Պետական բանկի $5^1/_2{}^0/_0$
1-ին շրջանի . . 99 ր. 75 կ.
2-րդ . . . . . 98 ր. — ,,
3-րդ . . . . . 97 ր. 75 ,,
4-րդ . . . . . 97 ր. 75 ,,
5-րդ . . . . . 97 ր. 75 ,,
Սբևել. փոխառութ. 5%
1-ին . ,, . . . 97 ր. 75 կ.
2-րդ . ,, . . . 97 ր. 50 կ.
3-րդ . ,, . . . 97 ր. 25 կ.
,, Վիճակահանութեան 5%
1-ին փոխառութ. 275 ր. 75 կ.
2-րդ . . . . . 250 ր. — կ.

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԻՆԴԻԱՐ ՍՊԻՆԴԻԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻ
ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑԻ
(Երևանեան հրապարակ՝ Ճեռնաձկաբոյժի տանը.)

Ընդունելութիւնը առևտ. օր.
Առաւօտեան 9—10 ժամին Ա. Բախտաւոյ—կանանց և երեխաների հիւանդութիւններից։ 10—12 ժամին կ. Բախտաւոյ—Ներքին չդալին հիւանդութիւնների և էլեկտրական բժշկութիւնն 12—1 ժամին Գ. Քաչարեանց—Արտաքին, վիրաբուժական, աչքի և մ.

Ներկայան (Տաճառկ) հիւանդութիւնների։
Ընդունելութիւնը 6—8 ժամը, իսկ շաբաթ և շաբաթ երեկոյեան ժամերին կակաղդի և ականջի հիւանդութիւնների։
Ամենայն օր քննուում են ծծմայրների և ծաւանների աւտղջութիւնները և ծորակ են կատում։
Վարձ իւրաքանչիւր համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոյեան 60 կոպէկ։
Զբաւարները անվարձ։
Հիմնադիր բժշկապետ
Գ. ՔՈՒՉԱՐԵԱՆՑ.
X—111

Լոյս կը տեսնի 1888-ին առանձին գրքով
Գ. ՁՈՒԲԱՐԻ
ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ
ՄԱՀՏԵՍԻ ՍԱՐԳԻՍ
ՄԻ ՎԱՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՓՇՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ

երկերը միասին։ Բաժանորդագինը 1 ր-էլն է ընդամենը։ Բաժանորդ գրուել կարելի է միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։ Օտար քաղաքներից գիմում են «Նոր-Դար»-ի խմբագրութիւնը ատպէս. Тифлисъ, въ редакцію ежедневной армянской газеты «Норъ-Даръ».
(իմ.) X—12

ԻՍԿԱԿԱՆ Է ԴՈՒՔՆԱԲԱՆԻ ԱՋՈ
ԴՐՕՇՄՈՎ ՄԻԱՅՆ
Huste-Nicht
Gerichtl. geschützt
ՄԻ՛ ՀԱՋԻՐ
Մեղրաբուսանվէն-Մալց-Եկատերակա և չաքարիզէններ։
Լ. Գ. ՊԻՇՏ ԵԻ ԸՆԿ. ԲՐԼՍԼԱՎՈՒՄ
Գինն է,—մի չիչը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. չաքարիզէնները 30 և 50 կոպէկ։
Գլխաւոր պահեստն է Ռուսիայի համար՝ Պետերբուրգ, Վ. Աւրբիսի մօտ, Բօլշ. Մօրսկայա, № 17։
Վաճառվում է,—Թիֆլիսում, գեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութիւն, Վ. Գրիմմակ։
Ձանազարհամախառ առանձին
(М. 4852) 32—9

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ
Ս. ՍԻՒԻ ԵԻ ԸՆԿ.
(М.) 50—11

Յանկանալով ազատել եմ հանգուցեալ ամուսին ստուգիչ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԱՔՏԵՒԱՆի գրած երկաթերթիներից՝ «ԳՈՒԻԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ» վերնագրով վէպը, հայ գպրոցական երեխէից, ժառանգում եմ յարգոյատար դիմելու հանդուցեալ յիշատակը յարգող հայ ընթերցողներին օգնելու յիշեալ վէպի հրատարակութեան, որից առացած արդիւնքը կը ծառայէ նրա մատաղահաս որբիկների ցաւերը մոտաւոր ամոքելու։
Բաժանորդագինն է 50 կոպէկ։
Այրի ուիկին Եաւշինեի Աբրահամեան,
(ա.) 5—4

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ
Խանարհարար խնդրւում է այն անձերից, որոնք Խոչիվ գալով կը գանկանան «Բա-Քիւ» հիւրանոցն իջնել, պահանջեն կառավարներից, որ նրանք նրան անպատճառ տանեն Ըքէնայա փողոցը (Անիվներսիտետսկայի անկիւնը), ուշադրութիւն չդարձնելով նրանց խօսքի վերայ, թէ Բաքի հիւրանոցի բոլոր սենեակները բռնուած են կամ նորոգվում են և այլն, որոնք առաջանում են միայն նրանից, որ Բաքի հիւրանոցը կառավարներին ոչինչ աւելորդ վարձատրութիւն չէ տալիս ուղևորներին տանելու համար։
ՍԵՆԵԱԿՆԵՐ 75 ԿՈՊԷԿԻՑ ՄԻՆՉԵՒ 5 Ր. ԱՒՏԱԶՆԱԿԱՐԳ ՀԻՒՐԱՆՈՑԻ ԲԱԼՄՈՐ ՁԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ. ՓԱՌԱՒՈՐ ՁԱՐԴԱՐԱՏ ՁԱՇԱՐԱՆ. ԽՒՍՏ ՁԱՓԱՒՈՐ ԳՆԵՐ.
(М. 19,118) 13—1

ԿՕՆՑԻՏԵՐԻԱ ԵԻ ՀԱՑԱԳՈՐԾԱՐԱՆ
ՊԵՏՐՈՍ ԻՒԶԲԱՇԵԱՆԻ
Երևանեան հրապարակի վերայ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Պատրաստի ունի ամեն օր նոր և լիարմ ԿՕՆՖԵԿՏՆԵՐ Լէ հրգելոյ և Լէ հօդուի ու պօմադէյ էկզոտած պետութիւնների ԿԱՐԱՆԴԱՇԱԿ, ՇԱՔԱՐԱՀԱՑ, ՅԱԻԿԱՑ, ՏՕՐՏ և ՔԱՂՑՐԱՒԻՆԵՒԻՔ ամեն պետութ։
Նոյնպէս բազմատեսակ և բազմաձև ՀԱՑԵՐ ԵԻ ՊԱՔՈՒԻՄԱՔ.
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԲՕՆԲՕՆԵՕՐ ԱՐԿՂԻԿՆԵՐ
ՓԱՌԱՇԵՆ ԵԻ ՁԱՐԳԱՐՈՒՆ
Ընդունում է պատուէրներ թէ Թիֆլիսում և թէ գաւառական չափազանց աջնուչափառ գներով և կատարում է նրանց ԱՐԱԳ ԵԻ ՃՇԳՈՒԹԵԱՄԲ։
Այն օտարաքաղաքացիների համար, ովքեր ունեն չանուչափառ են պատուիրում, լինում է նշանաւոր չէջում։
Հասցէն՝ Тифлисъ, кондитерская П. Юзбашева.
50—8

Дозволено цензурою. Тифлисъ 25-го Декабря 1887 г.

Տպարան Մ. Դ. Ռոտինեանց

Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр. д № 50.